

ՄՈՎԱՍԵՍ ՍՅՈՒՆԵՑԻՆ ԵՎ ՆՐԱ «ՅԱՂԱԴՅ ԿԱՐԳԱՅ» ԳՐՎԱԾՔԸ

Ն. Կ. ԽԱՀՄԻՋՅԱՆ

Մովսես Սյունեցու հայտնի աշխատություններից է մեզ հետաքրքրող «Յաղագր կարգաց» գրվածքը, որը հնուց ի վեր ընդօրինակվել է ձեռագրերում¹, բայց՝ ինչպես նրա մյուս գործերը, սա ևս՝ «Մովսեսի քերթողահար» կամ «Մովսեսի քերթողի» շփոթեցնող մակագրություններով²:

Արգյոք գա՞ է պատճառը, որ Ստ. Օրբելյանը, որն առիթը բաց չի թողնում սյունեցի հեղինակների վաստակները նշելու և դրվատելու, լռում է Մովսես Սյունեցու դրական գործունեության վերաբերյալ³:

Այդ մասին շահեկան տվյալներ առաջին անգամ արձանագրեց Մ. Զամչյանը՝ «Մովսէս եպիսկոպոս Սիւնեաց», — գրում էր նա, — ամփոփելով ձեռագրական աշխարհի ծանոթության վրա խարսխված իր կարծիքը, — վարժ յիմաստս հելլենական դպրութեանց, և առաւել ևս ի քերթուածս հռետորական հանդիսից հայկական լեզուի. մինչև կոչիլ նմա քերթող քաշ, և յոմանց անուանիլ քերթողահար՝ իբրև երկրորդ զկնի երանելոյն Մովսիսի Խորենացւոյ: Սա յօրինեաց զքերականութիւն և զճարտասանական գիրս. գրեաց և բաղում ճառս հռետորական ճոխութեամբ... Են և ոմանք՝ որք զբանի մի ի շարականաց Խորենացւոյն սմա ընծայեն: Եղեն սորա բազում աշակերտք. յորոց մին եղև Ստեփանոս Սիւնեցի երկրորդ⁴:

1 Հմմտ. Գրիգորիսի Արշարունայ քորեպիսկոպոսի Մեկնութիւն ընթերցութեան, աշխատութեամբ Ք. Զրաքյանի, Վենետիկ, 1964 (Ներածություն, էջ 26—31, ուր ներկայացվում է Վենետիկի Մխթարյանների Մատենադարանի № 475 գրչագիրը, որ գաղափարված է XI դ., և որը բովանդակում է Մովսես Սյունեցու քննարկվող հոդվածը):

2 Հստ բոլոր տվյալների, Մովսես Երզնկացին ևս, որ XIII հարյուրամյակի վերջերում իրագործեց Խոսրով Անձեացու «Մեկնութիւն ժամակարգութեան» աշխատության նոր, ընդարձակված խմբագրությունը (տե՛ս Յուդակ ձեռագրաց Խաչիկ վրդ.-ի Դադյան, Ա, էջ 92), դրա համար օգտագործելով ոչ միայն Հովհան Օձնեցու և Ստեփանոս Սյունեցու գրվածքները (հատվածաբար), այլև Մովսես Սյունեցու մեղ զբաղեցնող հոդվածի «Երից մանկանց» երգին վերաբերող մասը, այն տեսել ու բերել էր «Մովսէսի քերթողահար» մակագրությամբ: Ամեն ինչից երևում է, որ Երզնկացու իրագործած այդ խմբագրությունն է, որ հարատևելով հիմք է հանդիսացել Խոսրով Անձեացու հիշյալ աշխատության թե՛ առաջին, և թե՛ երկրորդ տպագրությունների համար: Տե՛ս «Գիրք, որ կոչի Մեկնութիւն Աղօթից, արարեալ երանելոյն Խոսրովու Անձեացեաց եպիսկոպոսի և այլ սուրբ վարդապետաց, և հավաքեցեալ ըստ կարգի ի միում տրփի ի Մովսիսէ ումմնէ աշխատասէր վարդապետէ», Կ. Պոլիս, 1730, էջ 130 և «Մեկնութիւն ժամակարգութեան, արարեալ երանելոյն Խոսրովու Անձեացեաց եպիսկոպոսի, և կարգադրեալն Մովսէսի գիտնական վարդապետի», Կ. Պոլիս, 1840, էջ 76: Հմմտ՝ Հ. Ա. Շառլան, Հայոց անձնանունների բառարան, հ. Գ (Մովսէս Երզնկացի):

3 Օրբելյանի՝ Մովսես Սյունեցուն նվիրված ժլատ տողերից լոկ այն ենք իմանում, որ նա, որպես Սյունյաց եպիսկոպոս, հաջորգել է «Տէր Յովհաննէ» ու գահակալել յոթ տարի, և եղել է Ստեփանոս Սյունեցի Բ-ի ուսուցիչը (տե՛ս «Պատմութիւն նահանգին Սիսական, արարեալ Ստեփաննոսի Օրբելեան Արքեպիսկոպոսի Սիւնեաց», Բիֆլիս, 1910, էջ 98, 130, 133 և 493):

4 Մ. Զամչյան, Պատմութիւն հայոց, հ. Բ, Վենետիկ, 1784, էջ 367:

«Հայկազեան» բառգրքի հեղինակները ևս, Մովսես Սյունեցուն ընդունելով որպես «Մովսէս քերթողի» անվամբ հարատևած Քերականի մեկնության ու հոգևոր մի քանի երգերի (մասնավորապես տաղերի) հեղինակ, նրա «Յաղագս կարգաց» գրվածքը նշում էին ի թիվս իրենց օգտագործած աղբյուրների⁵:

Գ. Զարպհանալյանը Մովսես Սյունեցուն իր իրավունքների մեջ հաստատելու տեսակետից ավելի կարևոր համարեց նախ ցույց տալ, որ նրան ընծայվող գործերը խորենացու համար «երկբայական» և նույնիսկ «անհրազատ» են⁶:

Խնդիրը լուկ մի պահ մթազնվեց խորենացուն տեղից բռնի կերպով շարժելով մինչև Մովսես Սյունեցու ժամանակները հասցնելու և անգամ նույնացնելու փորձերի հետևանքով⁷: Սակայն, երբ Ն. Աղոնցը «Մովսես քերթողի» անունով պահպանված «Մեկնութիւն քերականին» աշխատությունը հրատարակեց որպես Մովսես Սյունեցու գործ, մասնագետները երկմտանք իսկ չհայտնեցին⁸:

Այսպես գոյացավ Մովսես Սյունեցու (որ և Քերթողի) գրական-երաժշտական վաստակի մասին մի ընդհանուր պատկերացում, որը, նյութերի նվազության պատճառով, ամեն տեսակ առարկություններ կանխելու շափ ապացուցված չէ, բայց գիտական կշիռ ունի, քանի որ իր մեջ խտացնում է մի շարք հայագետների հնարավորին շափ առարկայացված համոզումը (որը մերն էլ է):

Առավել ընդունելի է համարվում «Յաղագս կարգաց» գրվածքի՝ Մովսես Սյունեցու գրչին պատկանելու փաստը⁹:

Արդեն նշեցինք, որ այդ գրվածքի «Երից մանկանց» երգին վերաբերող հատվածը հրապարակվել էր տակավին XVIII դ. առաջին կեսին: Գրվածքը (նման բնույթի մի-երկու այլ նյութերի հետ միասին) ամբողջապես լույս տեսավ 1910-ին, Վենետիկում, վերոհիշյալ XI դ. ձեռագրի հիման վրա, բնագրագիտական բարձր մակարդակով¹⁰, բայց, ինչպես մեզ հայտնի է, այնպես էլ շարժանացավ հայ պատմական թե տեսական երաժշտագիտության վերաբերմունքին: Ավելին, այդ հրատարակությունը շուտով վերածվեց թանգարանա-

⁵ Վեր բառգրք Հայկազեան լեզուի, հ. Ա, Վենետիկ, 1836, էջ 20:

⁶ Գ. Զարպհանալյան, Հայկական հին դպրութիւն, Վենետիկ, 1897, էջ 386 և 472:

⁷ Հմմտ. Մ. Օրմանյան, Ազգապատում, հ. Ա, մասն Բ, Պետրոս, 1959, էջ 796—797:

⁸ Մովսեսի Քերթողի Մեկնութիւն քերականին: Տե՛ս Ի. Ա. Д о н ц, Дионисий Фракийский и армянские толкователи, Петроград, 1915, стр 157 (հմմտ. նաև Առաքարանը, էջ СХСII): Տարիներ հետո միայն, Գ. Զահուկյանը վերաբժարժեց, որպես քերականի մեկնիչներ, Դավիթ Քերականին՝ Դավիթ Անհաղթի, և Մովսես Քերթողին՝ Մովսես Խորենացու հետ նույնացնելու գաղափարը, բայց, ինչպես հեղինակն է գրում՝ հայտնած լինելու համար իր կարծիքը միայն, «թեկուզ և թույլ փաստարկներով» (տե՛ս նրա «Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում, V—XV դդ.», Երևան, 1954, էջ 114—121): Հայագիտական ուրիշ աշխատություններում Քերականի մեկնության հեղինակ «Քերթողը» դարձյալ Մովսես Սյունեցին է (հմմտ. А. А. А д а м я н, Эстетические воззрения средневековой Армении, Ереван, 1955, стр. 41):

⁹ Տե՛ս Վ. Հ ա ց ու ն ի, Պատմութիւն հայոց Աղօթամատուցին, Վենետիկ, 1865, էջ 185 (որտեղից պարզ երևում է, որ հեղինակը «Յաղագս կարգացը» համարում է Մովսես Քերթողի «համառոտ գրութիւնը է դարէն», և որպես աղբյուր է օգտագործում այն, VI—VIII հարյուրամյակներին վերաբերող ծիսադիտական հարցերի պարզաբանման համար):

¹⁰ Տե՛ս «Հատուկ տիր բանք և ճառք ի մատենագրութեանց նախնեաց ի վերայ ժամասացութեանց և պատարագին», Վենետիկ, 1910, էջ 7—10 (այսուհետև՝ Ա բնագիր):

յին այնպիսի անմատչելի նմուշի, որ, ի վերջո, վրիպեց անգամ բանասերների ուշադրությունից: Ուստի զարմանալի չէ, որ տարիներ հետո «Յաղագս կարգաց» հոդվածին հանդիպելով ձեռագրական իր սեփական հավաքածույի՝ XVII դարասկզբում ընդօրինակված միավորներից մեկում ². Քյուրտյանը որպես անտիպ հրատարակեց այն, ըստ որում ներկայացնելով բնագրի հարազատ պատկերը՝ գրչի կիրառած անկանոն ուղղագրությամբ, տարօրինակ կետագրությամբ և բառային ու շարահյուսական բոլոր աղավաղումներով¹¹:

Այսպիսով հրապարակի վրա եղան միևնույն նյութի երկու տարբեր ընդօրինակություններ: Ա. բնագիրը՝ ինչքան էլ ընտիր՝ բայց մի քանի ուղղելի կետերով ու հայտնապես միջամտված խորագրով¹². և Բ. բնագիրը՝ ինչքան էլ աղճատված՝ այդուամենայնիվ մի-երկու բառի նախընտրելի ընթերցումներով ու ավելի անաղարտ պահպանված ընդհանուր վերնագրով¹³:

Բայց մասնագիտական վերլուծության առումով գրեթե ոչինչ արված չէ տակավին¹⁴:

Արդ, ձևականորեն այն թեև բաժանվում է երկու մասի¹⁵, մենք նրանում տարբերում ենք՝ աստվածաշնչական «Երից մանկանց» երգին, հայոց հնադույն Սաղմոսարան-ժամագրքի ութամասն կառուցվածքին և վերջինիս կապված՝ ութ-ձայն և երկու ստեղծի համակարգին վերաբերող հատվածներ:

«Երից մանկանց» օրհնության շուրջ ասվածը մեկնության կարիք չունի: Գուցե նշենք միայն, որ այդ օրհնության կապակցությամբ խոսելիս Սյունեցին հիշատակում է առավոտյան ժամի պաշտոններգությանը վերաբերող մի քանի ուրիշ և կարևոր կտորներ էլ: Մ սաղմոսը («Ողորմեա ինձ Աստուած»),

11 2. Քյուրտյան, Երաժշտության մասին երկու հատվածներ նախնաց մատենագրության, «Անահիտ», Փարիզ, 1935, № 1—2, էջ 30—32 (այսուհետև՝ Բ. բնագիր): Ի դեպ, Քյուրտյանի հրապարակած ձեռագրական երկրորդ հատվածն ևս (տե՛ս նույն տեղում, էջ 32—34), նախքան այդ լույս էր տեսել Կոմիտասի ջանքերով (համտ. «Հայոց եկեղեցական եղանակները», «Արարատ», 1894, էջ 256. «Երանելուն Բարսղի յաղագս ձայնից թէ ուստի իցեն» և այլն): Սակայն՝ լավ է, որ Քյուրտյանը տպագրել է այդ հատվածն էլ: Քյուրտյանի ձեռագրում դրա խորագրին նախակցված է հույժ հետաքրքրական մի ցուցմունք՝ «Առաջարան Կցորդարանի»:

12 Հիրավի, հազիվ թե կարիք կա ապացուցելու, որ Ա. բնագրի վերնագիրը հեղինակային ձևակերպումով չէ, որ հասել է մեզ («Մովսէսի Քերթողահօրն հայոց վարդապետի և Իմաստասիրի Յաղագս կարգաց եկեղեցւոյ բացայայտեալ ի շնորհաց հոգւոյն Սրբոյ»):

13 Բ. բնագրի բառային ու շարահյուսական մի շարք աղճատումներ ժամանակին հաջող կերպով սրբագրել է «Անահիտի» խմբագրությունը: Եթե, շարունակելով աշխատանքը նույն օրինակելի ոգով, հենվենք «Հայկազեան» բաղադրի հեղինակների տված տեղեկությունների վրա (հ. Ա, էջ 20), և բնագրիս խորագրի «Քերթողահօրն» ձևը փոխարինենք «Քերթողի» ձևով, կարծում եմ, կստանանք գրվածքի համար առավել անաղարտ մի խորագիր:

14 «Անահիտի» խմբագրությունը լույս էր թայելով Քյուրտյանի ուղարկած երկու նյութերը, հետևյալ ընդհանուր դիտողությունն էր արել միայն, դրանցից առաջինի կամ մեզ զբաղեցնող հոդվածի վերաբերյալ: «Առաջին հատվածը մեր Շարականին երաժշտական հորինվածքին աստվածաբանական, արվեստագիտական և պատմաբանական մեկնությունն է, բավական խորհրդավոր ու խրթին ոճով շարագրված, որ կրնա մեր հին եկեղեցական երաժշտության պատմությամբ զբաղվող մասնագետներուն ուսումնասիրության նյութ հայթայթել («Անահիտ», 1935, № 1—2, էջ 34): Այստեղ անտեղի է Շարակնոցի հիշատակությունը: «Անահիտի» խմբագրությունը նաև գրվածքիս հեղինակին չփոթեց խորենացու հետ:

15 Տե՛ս հրապարակվող բնագիրը, մինչև «Այս է պաաճառք ձայնից երաժշտականաց» հատվածը և դրանից հետո:

«Փառք ի բարձունս» և «Սուրբ Աստուած» երգերը (վերջինս՝ ակնարկով. «զերեք կին սրբասացութիւնսն») ու արևագալի (ՃԺԲ) սաղմոսի Գ տունը՝ «Յարեւելից մինչև ի մուտս արևու»¹⁶,

Հայոց կյանքում ութ կանոնների բաժանված հնագույն Սաղմոսարան-ժամագրքի ինքնատիպ կառուցվածքին վերաբերող բացատրությունը շատ հետաքրքրական է, որով իմացվում է, թե պաշտոնեթույնի ամենագործնական կողմերից մեկի հետ առնչվող այդ փաստը ևս, VII դ. մտածողի կարծիքով, ունի խորհրդանշական (սիմվոլիկ) իմաստ:

Ութ-ձայնի համակարգի առնչությամբ ծավալվող մտքերը ներկայացնելով հեղինակի բուն իսկ ասելիքը (որ հասկացվում է գրվածքի ենթախորագրից ևս՝ «Շարադրութիւն շարամանու» և այլն), պահանջում են համապատասխան լուսաբանություն:

Նախ հիշենք, որ հեթանոսական Հայաստանում տարածված և լուսատուների պաշտամունքի հետ կապված հնագույն հավատալիքների համաձայն՝ արեգակը, լուսինն ու աստղերը «են արինակ եղանակաց ձայնից և տրոհից գեղգեղմանց», և ընդհանրապես՝ լուսատուների շարժման ու արձակած ձայների ուսումնասիրության հիման վրա «գտաւ արուեստ երաժշտականութեան աշխարհի»¹⁷: Արդ, ինչպես արդեն նշել ենք¹⁸, վաղ ավատատիրության շրջանում մի քանի քաղաքակրթություններում նկատվում է հեթանոսական պատկերացումները քրիստոնեական վարդապետության խնդիրներին պատշաճեցնելու մի ընդհանուր միտում: Դիտնիսիոս Արիոպագացին (կամ նրա անվան տակ թաքնված հեղինակը) իր «Յաղագս երկնային քահանայապետութեանցն» աշխատության մեջ, ելնելով Եղեկիելի ու Նսայիի մարգարեություններից, վերաիմաստավորում է երաժշտության երկնային ծագման մասին հեթանոսական գաղափարները և միտք է զարգացնում, թե մասնավորապես եկեղեցական երաժշտարվեստը օրինակումն (կամ երկրորդումն) է սերովբենների և քերովբենների երգեցողության, որոնք երկնքում անդադար աստծուն են փառաբանում ասելով. «Սուրբ, սուրբ, սուրբ տէր զաւրութեանց, լի է ամենայն՝ երկիր փառաբանորա»¹⁹:

Ամեն ինչից երևում է, որ Հայաստանի ուսումնական շրջաններում, VI—VII դդ. ծանոթ էին Արիոպագացու հիշյալ աշխատությանը, և, համենայն դեպս, VII—VIII հարյուրամյակների մի շարք հայ մտածողներ²⁰ ձգտում են նույն

¹⁶ Սույն սաղմոսի կցորդն էլ (այսինքն Բ տունը՝ «եղիցի անուն տեառն») դորձածության մեջ մտած լինելով Եղր Փառածնակերտացու օրոք (հմտ. Վ. Հացունի, նշվ. աշխ., էջ 197), արևագալի ողջ կանոնի հաստատումը իրոք կապվում է Գյուտ Արահեզացու անվանը (հմտ.՝ Մ. Քեշիշյան, Ցուցակ հայերէն ձեռագրաց Զմամոի վանքի մատենադարանին, Վիեննա, 1964, էջ 73. նաև՝ Տաշյան, Ցուցակ..., էջ 516 և 689):

¹⁷ Տե՛ս մեր հոդվածը՝ Քննական տեսություն հայոց հին և միջնադարյան երաժշտության պատմության, ԳԱ «Լրաբեր» (հաս. գիտ.), 1970, № 10, էջ 24—25):

¹⁸ Տե՛ս ԳԱ «Լրաբեր» (հաս. գիտ.), 1971, № 1, էջ 55—56:

¹⁹ Տե՛ս Migne, Patrologiae Graecae, tomus 3, Sancti Dionysii Areopagite, De Coelesti Hierarchia, p. 211.

²⁰ Այդ թվում՝ Հովհան Օձնեցին (տե՛ս նրա «Յաղագս կարգաց եկեղեցւոյ» և «Դարձևալաղագս կարգաց եկեղեցւոյ» գրությունները—Ցովհաննու Իմաստասիրի Ամենեցւոյ մատենագրութիւնը, Վենետիկ, 1953) և Ստեփանոս Սյունեցի Բ-ն (հմտ.՝ Ժամակարգութեան Մեկնութիւն Ստեփանոսի Սիւնեաց եպիսկոպոսի, էջմիածին, 1917):

որով բացատրելի ձեռքի արարողության ու պաշտամունքային երգեցողության հետ սոնշվող այլևայլ փաստեր ու երևույթներ: Ահա այդ մտածողների շարքում առաջիններից մեկն է Մովսես Սյունեցին, որն իր քննարկվող հոգվածում աշխատում է հիմնավորել հայոց հնագույն Սաղմոսարան-Ժամագրքին կապված ութ-ձայնի համակարգի (որով և ողջ պաշտամունքային երաժշտության) ծագման, եթե կարելի է ասել՝ աստվածաշնչական մտահղացքը: Այդ անելիս նա բերում է զոդմատիկ բացատրություններ: Դրանց ընդհանուր շարադրանքի մեջ, սակայն, նկատելի են առանձին. ըստինքյան կարևոր դիտողություններ և վկայություններ, որոնք անհրաժեշտ է տարբերել:

Ուշադրավ է, օրինակ, որ գրվածքի ենթախորագրում «Հոգևոր երգարան» ասելով Սյունեցին հասկանում է՝ ութ սաղմոսականոնները, դրանց կից մարդարևական օրհնությունները, ու նաև քարոզները, աղոթքներն ու մի քանի հին համարրիստոնեական ընդհանրացած երգեր պարունակած ժողովածուն, ինչպես ցույց է տալիս հոգվածի ողջ բովանդակությունը: Այստեղից պարզ է. ուրեմն, որ նա, բացի հայոց հնագույն Սաղմոսարան-Ժամագրքից, հոգևոր երգերի կանոնացված ուրիշ ժողովածու չի ճանաչում²¹:

Այդ ժողովածուում հեղինակը զանազանում է, նախ՝ մեղեդիների կատարման երկու ընթացք (տեմպ). զնազ կամ ճորդաբ (—«շտամբաձայնութիւն»), և ծանր կամ քաջ (—«ստեղնաշարիութիւն»)²², ապա և՛ «ութամասն պատկանաւոր ձայնի» կամ ութ-ձայնի երաժշտական համակարգը, որով ենթադրվում են նաև երկու «ստեղի» ձայնեղանակները²³ (դարձյալ, դատելով ենթախորագրին հետևող ողջ շարադրանքից):

Անտարակույս, շահեկան են ձայնեղանակների հուզական բովանդակության որակին վերաբերող բնութագրումները (թեպետև՝ դրանցից բոլորը չէ, որ կարող են համապատասխանել արդի ընկալումներին): Մանավանդ, որ դրանք մատնանշելով նաև այդ ձայնեղանակների հուզական այս կամ այն տիպի ներգործությունը, ձեռք են բերում յուրահատուկ էթոսի նշանակություն ևս: Ըստ այդմ՝ դե-ն «ուրախալից ձայն» է, բե-ն՝ «ողբերգական», դե-ն «իզական աղա-

21 Այլ կերպ ասած՝ Մովսես Սյունեցին կամ չգիտե ներսես Իշխանցի կաթողիկոսի պատվերով Ռարսեղ ժոն երաժիշտ վարդապետի կազմած՝ հոգևոր ինքնուրույն («կցուրդ») երգերի «հոնրնտիր» անվանված ժողովածուն (որի մասին հաղորդում են պատմիչներ Վարդան Արեւելցին և Կիրակոս Դանաձեցցին) և կամ, որ ավելի հավանական է, «Ճոնընտիրը» կանոնացված ժողովածուի ուժ է ստացել չափազանց դանդաղորեն, երկար ժամանակամիջոցի ընթացքում:

22 Հմմտ. «Նոր բառգիրք հայկազան լեզուի», հ. Բ, էջ 493 և 745:

23 «Ստեղն» կամ «Ստեղի» խոսքի ձայնեղանակային այս իմաստը, որ կանգնած է բոլորովին այլ մի հարթության վրա, անուղղակիորեն կապված է նույնիսկ նրա արմատական նշանակությանը՝ նոր բառգրքի հեղինակները «Ստեղնի» դիմաց բերում են՝ «բուն և եղեգն տնկոց և բուսոց» բացատրությունը և ավելացնում. «Ստեղն կամ Ստեղ, Ստեղի, ասին նմանությամբ երկու ձայնքի շարականի՝ իբր հաստաբեստ և աճունաճեղ ի նուազս ծանր երգոց» 2. Աճառյանը ևս բառիս դիմաց գրելով՝ «բույսի ցողուն... ծուխի սյուն... բուն... կոճղ... բնիկ հայրառ... [stēl], (στῆλεχος — բուն)» և այլն, նաև մասնավորում է՝ «ծանր եղանակ, շարական», «ծանր եղանակով գեղեցիկալ» («Հայերեն արմատական բառարան», Երևան, 1932, հ. 2, էջ 427): Սրկու բառարաններում էլ, այսպիսով, փաստորեն մատնանշվում են ծանր, լայնորեն դարձված, բազմադրված եղանակները: Հետո, սակայն, կենցաղավարել են նաև զուսպ-դարձվածքներ և չափավոր-ծանր, կամ նույնիսկ լոկ չափավոր ընթացքի մեղեդիներ, որոնց «Ստեղի» բնույթը պայմանավորված է եղել՝ ձայնեղանակի հատկապես ելեշային հնարավորությունների ամբողջականացված (ինտեգրացված) օգտագործմամբ:

չողութիւնս ունի», բձ-ն՝ «խմբական աղաչողութիւն», ակ-ն խորհրդանշում է «լալումն և կոծումն»²⁴, գկ-ն բնորոշվում է որպէս «բերկրալից ձայն»²⁵ և այլն:

Ամբողջովին այլաբանական-խորհրդանշական բնորոշումներից մի-երկուսը դարձյալ հնարավոր է հարաբերել տվյալ ձայնեղանակի որևէ հատկության հետ: Օրինակ ած-ի կապակցությամբ ասվածը, թե «յառաջին ձայնի հնչեցեալ լինի փողն Գաբրիէլեան», քանի որ Գաբրիէլյան ակնարկված նվագը պատկերվում է որպէս առարկություն չվերցնող աղբարարության նման մի բան: Իսկ ած-ի ելնէջի համար դա հատկանշական է նրանով, որ նրանում բացակայում է լադային որևէ հակաթեզ²⁶:

Վերջապէս՝ ձայնեղանակներին վերաբերող դատողությունների շարադրանքը մեզ տրամադրում է երկու կարևոր հենակետ ևս. հասկացություն՝ հնադույն «յարակայ», այսինքն մշտակա կոչված (կամ առավել երկարակայաց ու գլխավոր համարված) չափանմուշ երգ-եղանակների շուրջ, և տեղեկություն՝ մի շարք սաղմոսների ու քարոզների եղանակների մասին: Այսպէս, պարզվում է, որ հայոց հին պաշտոնագրության մեջ Պահոց սաղմոսները երգվել են բկ-ում, Արմավենյաց (կամ Մաղկազարդի) օրվա սաղմոսները՝ գկ-ում, ստողոգիական սաղմոսները՝ դկ-ում, իսկ ժամագրքի քարոզները («տուրնչեան և գիշերոյ»)՝ գձ-ում:

Որպէս «յարակայ» փաստորեն հիշատակվում են երեք երգեր (մեկը՝ նոր. երկուսը՝ Հին կտակարանից). ած-ում՝ «Փառք ի բարձունս»²⁷, ակ-ում՝ «Օրհնեսցուք զՏէր»²⁸, և բձ-ում՝ «Օրհնեալ ես տէր»²⁹:

Մեզ մնում է նշել, որ Սյունեցու գրվածքի սույն հրատարակության համար օգտվել ենք թե՛ Ա, և թե՛ Բ բնագրերից, որոնք իրար լրացնում են: Տողատակում անդրադառնում ենք մեկի թերին կամ մյուսի առավելությունը ցույց տվող կետերից լուրջ գլխավորներին, իսկ ուղղելի սխալներից՝ միայն կարևորներին ու երկուսի համար էլ ընդհանուր եղողներին: Կետադրության և ուղղագրության համար հիմք է ծառայել Ա բնագիրը:

²⁴ Որ հետագայում բազմիցս կրկնվելու է ձեռագրերում տարբեր ձևերով, և անգամ ժողովրդական ողբերի՝ որպէս ակ եղանակի բուն աղբյուրի՝ հիշատակությամբ:

²⁵ Թեպետ ավելացվում է նաև թե՛ «որ և վառ իսկ կոչի [իմա՝ հուն. βάρυς խոսքից], այսինքն է՝ խիստ ձայն», որով հստակելի մի բան, համեմայն դեպս, մնում է բնութագրության մեջ:

²⁶ Հմմտ. X. Кушнарев, Вопросы истории и теории армянской монодической музыки, Л., 1958, стр. 421—424.

²⁷ Առավոտյան երգ, ընդհանրացած մ. թ. I դարում, որի գրական խոսքը ծագումով կապված է Ավետարանին (Ղուկ. Բ, 14):

²⁸ Մովսեսի և որդւոցն Իսրայելի (Նիկից ԺԵ, 1):

²⁹ Օրհնութիւն Երից մանկանց (Դան. Գ, 26):

ՄՈՎՍԷՍԻ ՔԵՐԹՈՂԻ ՅԱՂԱԳՍ ԿԱՐԳԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԲԱՅԱՅԱՅՏՈՒԹԻՒՆՔ*

Նախադրութիւն շարամանու Հոգեւոր երգարանիս ըստ երաժշտական չափոց՝
շտամբաձայնութեան. ստեղնաչափութեան, ուրամասնեալ պատկանաւոր
ձայնից պատճառֆ**

Եւ արդ, քանդի նախկին հնչեաց բարբառն աստուածային՝ թէ Ուր եւ Ադամ. եւ երկրորդ՝ թէ Ուր է Աբէլ եղբայր քո. եւ երրորդ՝ թէ Ուր է Սառս կին քո.*** արդ այս ամենայն ձայնքս հարազատք են առաջի ձայնին, որոց՝ սրբոց Սրովբէիցն հնչումն յերկրիս՝ երկրորդ յօրինեցան փառաբանութեան երգքն. Քանդի յառաջին փառաւորչացն, յառաջին հրաշափառական ձայնիւ հնչեաց բարբառն յասելն՝ եթէ Փառք ի բարձունս Աստուծոյ եւ յերկիր խաղաղութիւն. Իսկ կողմն նորին՝ զողորձական մաղթանս ունի, եւ զերկրածագական աղաթան՝ երդ Մովսէսեան յերկրորդում խորանին վկայութեան, ըստ որում համաձայնի աւրհներգութիւն Մարիամայ՝ քեռն Ահարովնի՝ յերգելն ի Կարմիր ծովուն, թէ Աւրհնեսցուք զՏէր զի փառաւք է փառաւորեալ:

Իսկ երկրորդ ձայնն՝ զխմբական աղաչողութիւն ունի, զառ ի վտանգից ասրեցելոցն, եւ զըրոցախմբեցելոց հրախաղաց զերից մանկանցն զաւրհներգութեան երգսն ի մէջ հնոցին, յաղագս երկուց փրկութեան, մարմնոյ ասեմ եւ հոգւոյ. որպէս ասի յերկրորդ ձայնիւ երգեալ՝ յերկրորդ ժամու աւուրն: Իսկ կողմն նորին՝ ողբերգական ձայն. սովաւ յաւրինեցան Սաղմոսք ի սուրբ ի պահս քառասներդացն եւ Քրիստոսի շարշարանաց աւուրն, ըստ երկրորդի զղջման ապաշխարողացն, զառաջին զբարեզարդութիւնն ոչ ունելով:

Իսկ երրորդ ձայն՝ զիգական աղաչողութիւնսն ունի. սովաւ յաւրինեցան բարոգութիւնք տուրնջեան եւ գիշերոյ, ըստ առ ի յերրորդական տողութենէն, ըստ երից ամանակաց պիտոյից, ըստ մարմնոյ եւ շնչոյ եւ հոգւոյ: Իսկ կողմն նորին՝ բերկրալից ձայն, որ եւ վառ իսկ կոչի, այսինքն է՝ խիստ ձայն: Սովաւ յաւրինեցան Սաղմոսք աւուրն Արմաւենեաց, ի մտանելն Յիսուսի յԵրուսաղէմ. որոց եւ համաձայնի աւրհներգութիւն տղայոցն, յասելն՝ եթէ Աւրհնեալ եկեալ անուամբ Տեառն:

Իսկ չորրորդ ձայն՝ զընդհանուր զբարոգութիւնն յայտնէ ըստ չորս անկիւնս աշխարհի, ըստ չորից ժողովոցս եւ ըստ չորից բաղկացութեան մարդոյս: Իսկ կողմն նորին՝ ուրախալից ձայն. սովաւ շարագրեցան**** ստողագիականք Սաղմոսք ի սուրբ Պասքին, ի Յարութեանն Քրիստոսի, ի մի պարունակութիւն երկնայնոցն եւ երկրաստրացս, ըստ առաջին բաղկացութեանն:

Արդ, Աստուած անեղձ անուն արարչական ասի, եւ Տէր դատողական, որ զիմանալի աշխարհն բաղկացոյց, տասն թուովք աւրհնաբանիչս իւր կարդա-

* Բ ընգրի խորագիրն է սա (լոկ մեկ սրբագրութեամբ. «Քերթողի», փոխանակ «Քերթողահարն»), որ և ավելի անաղարտ է, ինչպես նշեցինք վերը:

** Ա ընգրի առանձնահատկութիւնն է սա՝ ենթախորագրի հստակ տարանջատումը հաշորդ շարագրանքից:

*** Բն շունի. ե երրորդ՝ թե Ուր է Սառս կին քո:

**** Բ-ում՝ շարագրանքան:

պետեաց* իմանալի խորանին. յորոց մինն ասոր անկեալ, յարհնելոյն զԱստուած անարժան գտաւ: Իսկ ինն դասուցն անդադար ի Հոգւոյն Սրբոյ կան ի փառաբանութիւն իւրեանց Արարչին: Զոր եւ ի նմին Հոգւոյ ուսեալ մարգարէիցն՝ ուսուցին եւ ծանուցին որդւոց մարդկան զերաժշտական երգս արհնութեան: Իսկ զգալի աշխարհս՝ տասն աստիճանաւ պատուեալ, զոր ի զանազան ժամանակս ուսոյց Հոգին Սուրբ՝ տասնաղեալ սաղմոսարանաւ սաղմոսել Տեառն:

Իսկ յապառնի ժամանակին՝ առաջին ձայնիւ հնչեցեալ լինի փողն Գարիէլեան, եւ գերեզմանք թանան, եւ մեռեալք յառնեն:

Երկրորդ ձայնիւ լսի բարբառ՝ եթէ Փեսայ գայ, արիք ելէք** ընդառաջ նորա: Երրորդ ձայնիւ մարգարէքն վառին որպէս սպառազէնս առաջի նորա. և և կողմն արդարոցն վերաբերի՝ հանապազ ընդ Տեառն լինելով:

Զորրորդ ձայնիւ կարգի ատեանն ահագին***, եւ նստի դատաւորն յաթոռն՝ դատել զաշխարհս արդարութեամբ:

Իսկ կողմն առաջին՝ լալումն եւ կոծումն մեղաւորաց ի դժոխս:

Իսկ երկրորդի կողմն՝ գետ հրոյ յորդեալ ելանէ առաջի նորա:

Իսկ երրորդի կողմն՝ նովաւ լսին բարբառք դիմադարձացն եւ անհաւատիցն՝ եթէ երթայք, անիծեալք, ի հուրն յաւիտենից, որ պատրաստեալն է սատանայի եւ հրեշտակաց նորա:

Իսկ չորրորդի կողմն՝ ուրախալից ձայն. նովաւ կողին արդարքն՝ եթէ եկայք արհնեալք Հաւր իմոյ, ժառանգեցէք զարքայութիւնն, պատրաստեալ ձեզ ի սկզբանէ աշխարհի:

Իսկ երկրորդի տեղն՝ զորս գտեալ հրոյն, ճարակ եւ կերակուր իւր առնէ զամենեւեմս:

Իսկ վերջին տեղն՝ պատրաստէ սիրելեաց իւրոց բաժակ փրկութեան եւ անմահութեան յարքայութեանն երկնից:

Այս է պատճառք ձայնից երաժշտականաց:

Եւ եթէ ընդէ՞ր ութ կանոնիւ կարգեալ են Սաղմոսք Դաւթի, որով հանապազ կատարեմք զպաշտամունս .եկեղեցւոյ, ինձ այսպէս թուի՝ թէ եւթն կանոնն՝ ըստ եւթն գարուն, իսկ ութն՝ ըստ ութ դարուն կարգեալ է. զոր եւ իմաստունն Սողոմոն ի զգանութեան խրատուն տարացոյց տայ յասելն՝ եթէ Տո՛ւր բաժինս եւթանց, այլ եւ ութից. եւ դարձեալ ի Սաղմոսն Դաւթի յասելն՝ եթէ Սաղմոս վասն ութերորդին:

Արդ, որպէս վերագոյն ասացաք, եթէ եւթն կանոն՝ յաղագս եւթն դարուն, իսկ ութերորդն՝ ըստ ութ գարուն խորհուրդն բերէ յինքեան, զոր եւ ի վերայ դարձի գերութեանն կարգեալ է ի Բաբելովնէ յԵրուսաղէմ. իսկ ըստ իմանալի տեսութեանն՝ յերկրէ յերկինս եւ յերկիր աւետեաց նախաշաւիղ ի վերելք: Վասն զի արինակ էր նոցայն մերոցս. Երուսաղէմն՝ դրախտին, նաբուզադաւնոսոր՝ սատանայի, բաբելացիքն՝ դիւաց, երեք մանկունքն՝ մարդկային բնութեանս, հնոցն հրոյն՝ հանդերձեալ հրոյն:

* Ա-ում՝ կարապետեաց. Բ-ում՝ կարապետել:

** Բ-ն շունի. ելէք:

*** Բ-ում՝ ատեան դատաստանին:

Իսկ զերգս Երից մանկանցն Հանապազ առաւաւտին երգել չեկեղեցւոյ, զի որպէս նորա դերեայք ի բարեխոնական բռնաւորէն ի հնոցն անկախէին, նոյնպէս եւ մեր ի մէջ՝ հնոցի կենցաղոյս՝ գերեալք յաներևոյթ բռնաւորէն, եւ բմրոնեալք պէսպէս ախտիւք եւ լուցկիք եղեալ յաւիտենական հրոյն: Աստանաւոր զողջես իմն հրեշտակական ազդամբ ի թառամեցունոց քնոյն զարթուցեալք աւուր աւուր ընդ առաւաւտսն զերգս երից մանկանցն ի բերան առեալ՝ ասեմ. Լթէ Աւրհնեալ եւ Տէր Աստուած հարցն մերոց, աւրհնեալ եւ փառաւորեալ անուն քո յաւիտեան: Եւ որպէս եւ նորա ի փրկութիւն անձանց իւրեանց՝ առ իւրեանց փրկիչն մատուցեալ, եւ որպէս առ երկինս ի հնոցէն ի վեր զոչէին, յորդորելով զամենայն արարածս ի փառաբանութիւն Աստուծոյ. ըստ նմին աւրինակի եւ մեր՝ իբրեւ անդամք մարմնոյ նորա եւ ոսկերաց նորա՝ ի վերաւ մեր եւ ի սեղ բերելով զգլուխն՝ վերագոչեմք աղաղակելով չընդհանուր տեսակս արարածոց՝ եթէ Աւրհնեցէք ամենայն գործք Տեառն զՏէր: Իբրեւ զի ազատեալք մեր՝ ի մեղաց եւ ազատութեանն մերոյ հաղորդք լեալք ամենայն բնութիւնք արարածոց, հարկաւորին ամենայն իրաւք եւ նորա ընդ մեզ օրհնել եւ փառաւորել զԱստուած, դայն՝ որ աղատէն զամենեւին:

Բայց պարտ է նախկին ապաշխարութեամբ ի մեղացն արդարանալ, եւ ապա հրաման տալ արարածոցն՝ ի փառաբանութիւն Աստուծոյ: Նախ ասել՝ Լթէ Մեղաք, անաւրինեցաք, յանցեաք, եւ ապա համարձակել եւ ասել՝ եթէ Աւրհնեցէք ամենայն գործք Տեառն զՏէր. նախկին ասել՝ եթէ Ողորմեա ինձ, Աստուած, ըստ մեծի ողորմութեան քում, ըստ բազում գթութեան քում բաւեալ զանաւրէնութիւնս իմ. առաւել լուա զիս, յանաւրէնութենէ իմմէ եւ ի մեղաց իմոց սուրբ արա զիս, եւ ապա համարձակել եւ ասել. Աւրհնեցէք զՏէր յերկնից, աւրհնեցէք զնա ի բարձանց. աւրհնեցէք զՏէր հրեշտակք նորա, աւրհնեցէք զնա՝ ամենայն զաւրութիւնք նորա. եւ յետ այնորիկ բարձրանալ քան զզալի արարածս յիմտնալի բնութիւնսն, եւ ընդ անմարմնոցն դասուց՝ գոչել՝ եթէ Փառք ի բարձունս Աստուծոյ եւ յերկիր խաղաղութիւն եւ ի մարդիկ հաճութիւն: Եւ այնպէս միաբանեալ ընդ վերնոցն՝ գեղեցիկ հակամիտութեամբ՝ նախ զսկրովրէիցն զհնչումն երգեն զերեքկին սքեասացութիւնսն, եւ ապա զմանկունս եկեղեցւոյ յորդորելով՝ համաձայնել ընդ անմարմնական բնութիւնսն, յասելն՝ թէ Յարեւից մինչեւ ի մուտս արեւու աւրհնեցէք զանուն: Տեառն, որ գթացաւ առ աղքատ եւ տառապեալ բնութիւնսն, յարուցանելով յերկրէ եւ ի մեղաց եւ բնակեցուցանելով ի բարձունս յանմարմնական բնութիւնսն, փառաբանիչս ամենասուրբ Երրորդութեանն. նմա փառք յաւիտեանս յաւիտենից՝ ամէն: Ողորմես: Տէր մեր:

* Բ-ն չունի. մէջ:

** Բ-ն չունի. մեր:

*** Բ-ն չունի. արարածոցն:

**** Բ-ում՝ զտէր:

***** Ա-ում՝ զօրացն:

***** Թեւ Ա-ում, և թեւ Բ-ում՝ հակառակութեամբ:

***** Բ-ն չունի. յաւիտենից:

МОВСЕС СЮНЕЦИ И ЕГО СОЧИНЕНИЕ «О ЧИНАХ»

Н. К. ТАГМИЗЯН

Резюме

Небольшое сочинение Мовсеса Сюнеци (VII в.) «О чинах» (церкви) в прошлом было опубликовано два раза. Публикации давались на основе различных списков.

В нем идет речь о древнеармянской Псалтири-Часослове, о ее восьми канонах и, главное, о восьми гласах армянской церковной монодии.

Философ раннего средневековья пытается обосновать библейскую концепцию происхождения гласов. В сочинении автор излагает ряд ценных данных, касающихся отдельных сторон вопросов музыкальной теории и практики.